

Հայկականից թարգմանել Եւրոպականի և ըստ տեսական օրէնք-ների ներդաշնակել խառն խմբի համար:

Անշուշտ, շատ դժուար գործ է առանց մի ձայն անգամ փոխելու կամ կրճատելու, Հայկականի բոլոր խաղերն անգամ վերածել Եւրոպականի և այս յաջողուել է պ. Ռ. Ղ. -ին: Սիրուն ու ներդաշնակ լուում են «Ի վերինն Երուսաղէմ», «Որ զշնորհս», «Հրաշափառ» ևայլն շարականները:

Ակկորդները շատ սահուն են յաջորդում միմեանց, տեսական օրէնքները զանց չեն առնուած. շատ լաւ են վճռուած սեպտակկորդները, որոնք մի եղանակի զարդն են կազմում:

Գեղեցիկ գործ է սկսել պ. Ռ. Ղ. -ն և խրախուսանքի արժանի մի գործ. ցանկալի է, որ այս ուղղութեամբ էլ առաջ գնար և գեղեցիկ ներդաշնակութեամբ հարստացնէր մեր եկեղեցական երգեցողութիւնը:

Գներն էլ շատ մատչելի են՝ Ա. -ի 30 կ. Բ. 60 կ. Գ. 70 կ. Դ. 50 կ. յանձնարարում ենք մեր ուսուցիչ խմբապետներին:

Ռուբէն արեղայ

ՍՏԱՑՈՒՄԻՆ ԳՐԹԵՐ.

Մազաքիտ արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հայ ազգափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած. 1—10 պրակ. Կոստանդնուպոլիս, 1912—1913. պրակի գինն է 50 կոպէկ:

Х. И. Кучукъ-Іоаннесовъ, Старинныя армянскія рукописи и армянскія надписи, находящіяся въ предѣлахъ Россіи и некрологъ Г. А. Халатьянцъ, Москва, 1912.

Д. М. Меликсетъ-Бековъ, Рукопись Ширакяна XV вѣка, открытая въ Одессѣ, Тифлисъ, 1913.

Աւետարան բոս Մարկոսի Զէյթունի դատարարրաւով, Կոստանդնուպոլիս, 1913.

Գրիգոր ա. քհ. Գրիգորեանց, Սոխակ Հայաստանի, 10-րդ տպագրութիւն, Բաղու, 1912.

Տիպ և Տառ. «Գիր»-ին ծագման և միջազգային ու Հայկական տպագրութեան վրայ ձգուած ակնարկ մը Հայ տառերու գիտին հազար հինգ հարիւրամեակի և Հայ տպագրութեան չորեքդարեան կրկնակ յորելեաններուն առթիւ, Կոստանդնուպոլիս, գինն է 7 ֆրանկ:

